*Արձանագրություն N 2*

*<< ՇՄԳՇԲՕԿ-ՇՀԱՊՁԲ-16/16-1>> ծածկագրով շրջանակային համաձայնագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի*

ք. Գյումրի 01 հուլիսի 2016թ., ժամը՝ 13⁰⁰

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Մանուկյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Սարաֆյան

Ն. Գևորգյան

Մ. Ղանդիլյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բադալյան

***1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեները, փվյալներ՝ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին***

_______________________________________________

*(Ռ. Մանուկյան)*

1.1 Գնման ընթացակարգը կատարվում է

ա. ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 84-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն: Այն է՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով ապրանքների գնման դեպքում պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը պատվիրատուն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա Կարգով սահմանված պահանջներով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով պատվիրատուն մեկ աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիր կնքած անձին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և կնքվելիք պայմանագրի փոփոխության նախագիծը: Եթե մասնակիցը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի փոփոխությունը, ապա այդ մասով պատվիրատուն ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է նախկինում կնքված պայմանագիրը՝ առանց պայմանագրի կողմի նկատմամբ պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

I. Բժշկական սարքավորումների և գործիքների քանակները ընդունել՝ 2016թվականի տարեկան քանակներից նվազեցնելով 2016թվականի 1-ին կիսամյակի ծախսված քանակները, ըստ չափաբաժինների:

II. Բժշկական սարքավորումների և գործիքների գնման նպատակով՝ ՇՀ ընթացակարգով կայանալիք <<ՇՄԳՇԲՕԿ-ՇՀԱՊՁԲ-16/16-1>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից, որպես նախահաշվային գին ընդունվում է *<<ՇՄԳՇԲՕԿ-ՇՀԱՊՁԲ-15/16>>*՝ ծածկագրով կայացած մրցույթի գործող գները /մեկ միավորի գնի և նոր խմբաքանակի արտադրյալով/:

բ. Սահմանված կարգով ծանուցվել են <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած և որպես հնարավոր մասնակից գրանցված բոլոր կազմակերպություններին:

գ. Գնային առաջարկ պարունակող ծրար կազմել և ներկայացրել են հետևյալ մասնակիցները.